ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ և ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-256-06.05.2022-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ և ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»				
1.	***ՀՀ կառավարություն***	Օրենքի նախագծի վերնագիր	Օրենքի նախագծի վերնագրում «լրացում» բառը փոխարինել «լրացումներ» բառով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.	***ՀՀ կառավարություն***	Նոր 1-ին հոդված	Օրենքի նախագիծը լրացնել նոր 1-ին հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ՝ «**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 9-րդ հոդվածի 4-րդ մասում «կարգավորումները» բառից հետո լրացնել «, բացառությամբ Օրենսգրքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգավորման,» բառերը:»	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
3.	***ՀՀ կառավարություն***	1-ին հոդված	«Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 202-րդ հոդվածի՝» բառերը փոխարինել «**Հոդված 2.** Օրենսգրքի 202-րդ հոդվածի՝» բառերով,	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
4.	***ՀՀ կառավարություն***	1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի 3-րդ պարբերություն	Հոդված 1-ի 1-ին մասի 3-րդ կետի 3-րդ պարբերության մեջ «բորսայում,» բառից հետո լրացնել «և փոխառությունը ներգրավվում է փոխկապակցված չհամարվող փոխատուից,» բառերը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

5.	***ՀՀ կառավարություն***	1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի 4-րդ պարբերություն	Հոդված 1-ի 1-ին մասի 3-րդ կետի 4-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբակցությամբ՝ « - եթե փոխատու ֆինանսական կազմակերպությունը փոխկապակցված չէ փոխառուի հետ և փոխատու ֆինանսական կազմակերպությունը համարվում է ցուցակված Կառավարության սահմանած ցանկում ներառված ֆոնդային բորսայում կամ փոխատուն ընդգրկված է Կառավարության սահմանած՝ միջազգային զարգացման կազմակերպությունների ցանկում:»	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
6.	***ՀՀ կառավարություն***	Նախագիծ	Նախագծում ուղղել հոդվածների համարակալումը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	